ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

29.03.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԱՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան <<08>> մարտի 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ս. Զատիկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ և <<Թունել>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս Ընկերության տնօրեններ Ա. Մարտիկյանի և Ա. Սանահյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և 01.03.2016թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), հիմք ընդունելով 29.03.2017թ. կնքված <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ>> ծածկագրով գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողի կողմից՝ 2017 թվականի մարտի 29-ին կնքված ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ Պայմանագրի՝ 2018 թվականի կատարված աշխատանքների (Համաձայնագիր N 4-ի հավելված 1.2.1-ով նախատեսված) և 2019 թվականին Արփա-Սևան N 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների իրականացման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման (այսուհետ՝ Ծառայություն) համար վճարման ենթակա գումարը սահմանել 8 085 300 (ութ միլիոն ութսունհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Ծառայությունը մատուցվում է 2019 թվականի հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ:

1.3 Սահմանել Ծառայության վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.4 Պատվիրատուն 2019 թվականին իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2019թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մաս:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	<<Հայջրնախագիծ	<<Թունել>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ինստիտուտ>> ՓԲԸ	ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
ՖՆ աշխատակազմի	ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12	<<Էվոկաբանկ>> ՍՊԸ
գործառնական վարչություն	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ	Հ/Հ 1660000445850100
Հ/Հ 900011011716	Հ/Հ 1150000088680300	ՀՎՀՀ 02542333
ՀՎՀՀ 02555816	ՀՎՀՀ 00012859	Տնօրեն
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	Տնօրեն	
պաշտոնակատար		
Ս. ՉԱՏԻԿՅԱՆ	Ա. ՄԱՐՏԻԿՅԱՆ	Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<29>> մարտի 2017թ. կնքված
N <<ՀՀԷԵՊՆՋՏՊԿ-ԲԸՀԾՁԲ-ԱՍ-17/4-Հ>> գնման պայմանագրի
<<08>> դեկտեմբերի 2019թ.
կնքված Համաձայնագիր 4-ի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	98111140-1	հեղինակային հսկողության ծառայություններ- Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների իրականացման նկատմամբ		3 153 267	3 153 267	4 689 474	4 689 474	4 689 474	6 549 093	6 549 093	6 549 093	8 085 300	8 085 300	8 085 300	**8 085 300**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011716
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Ս. ՉԱՏԻԿՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ
ք. Երևան ,Վ. Վաղարշյան 12
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000088680300
ՀՎՀՀ 00012859
Տնօրեն
Վ. ՍԱՐՏԻԿՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Թունել>> ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 20
<<Էվոկաբանկ>> ՍՊԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333
Տնօրեն
Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
Կ.Տ.